ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2021/35

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոք բերող՝ «Մովսեսյան» ՍՊԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Ա. Ասատրյանի, Գ. Գևորգյանի,

«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մովսեսյանի,

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տոներային քարտրիջներ, լուսապատճենահանող սարքավորումների մասերի, թանաքի, տպագրական սարքերի մասերի, մետաղալարերի և ջերմսոսինձի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 29.04.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին փոփոխել հրավերը, այն է՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հրապարակված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերում ներառված է հետևյալ պահանջը՝ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 26, 27,28, 29, 32, 35-րդ չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ, պահանջը հանելով հրավերից:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.04.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 29.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6541-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 29.04.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

29.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/35 համարի ծածկագիրը:

06.05.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա՝ Բողոքներ քննող անձի 10.05.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/7300-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

18.05.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա՝ Բողոքներ քննող անձի 20.05.2021թ.-ի գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել նաև «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն:

06.05.2021թ.-ին, 14.05.2021թ.-ին, 25.05.2021թ.-ին և 31.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.05.2021թ.-ին:

2. «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մովսեսյան» ՍՊԸ-ն 29.04.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հրապարակված ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերում ներառված է հետևյալ պահանջը՝ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 26, 27,28, 29, 32, 35 չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Նշված պահանջի կապակցությամ Մովսեսյան ՍՊԸ-ն դիմել և պահանջել է պարզաբանումներ, ինչպես նաև խնդրել է որպեսզի նշված պահանջը հանվի հրավերից, քանի որ այն խտրական է և անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար:

Պատվիրատուն չի տվել պարզաբանում վերջին հարցմանը, և չի փոփոխել հրավերը:

Ելնելով այն իրողությունից, որ Մովսեսյան ՍՊԸ-ն ցանկանում է մասնակցել նշված ընթացակարգին և մատակարարել Xerox ֆիրմայի օրիգինալ արտադրանք, սակայն չի հանդիսանում նշված ֆիրմայի պաշտոնական ներկայացուցիչը, ուստի նշված պահանջի պատճառով չի կարողանում մասնակցել հրավերին, քանի որ նշված երաշխիքային նամակը կամ համապատախսանության սերտիֆիկատը կարող է տրամադրել միայն Xerox ընկերությունը կամ դրա պաշտոնական ներկայացուցիչը:

Համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ըստ նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝

Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Տվյալ դեպքում, հրավերով նախատեսվել է ըստ էության օրենքով չնախատեսված որակավորման չափանիշ՝ արտադրողից կամ նրա ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ սերտիֆիկատ ներկայացնելու հնարավորություն ունենալու պահանջի տեսքով, ինչը ուղղակի հակասում է վերը մեջբերված նորմերի պահանջներին, քանի որ ըստ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջի՝ Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝ նախատեսված չեն սույն հոդվածով:

Ըստ էության, Պատվիրատուն ի լրումն Գնումների մասին ՀՀ օրենքոի 6-րդ հոդվածի 3-րդ մասնով նախատեսված որակավորման չափանիշների, անհիմն կերպով հրավերով նախատեսել է լրացուցիչ որակավորման չափանիշ, որը առերևույթ խոչնդոտում է մեր կազմակերպության մասնակցությունը սույն ընթացակարգին, քանի որ նշված պահանջով պայմանավորված, մեր կազմակերպությունը չի կարողանում մասնակցել ընթացակարգին:

Արտադրողի կամ նրա ներկայացուցչի կողմից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի պահանջը հակասում է նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին, Օրեքնի սկզբունքներին քանի որ նշված պահանջը ըստ էության խտրական և անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում մեր կազմակերպության և պաշտոնական ներկայացուցիչ համարվող կազմակերպության միջև, ստեղծելով այնպիսի իրավիճակ, որ ունենալով նույն ապրանքները, մենք չենք կարող մասնակցել սույն ընթացակարգին, քանի որ չենք կարող ներկայացնել պահանջվող երաշխիքային նամակը կամ համապատասխանության սերտիֆիկատը:

Ելնելով ասվածից պարզ է դառնում, որ հրավերով նախատեսված է այնպիսի պայման, որը անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում Xerox ֆիրմայի պաշտոնական ներկայացուցչի և մեր և այլ կազմակերպությունների միջև, և անհնարին է դարձնում մեր կազմակերպության մասնակցությունը նշված ընթացակարգի այն չափաբաժիններին, որոնց համար պահանջվում է երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ, եթե ցանկանում ենք մատակարարել օրիգինալ արտադրանք, և այդ բացառիկ հնարավորությունը ընձեռվում է միայն Xerox-ի պաշտոնական ներկայացուցչին և/կամ դրա կողմից ցանկալի այլ կազմակերպությունների, որոնց նա կտրամադրի նշված փաստաթղթերը պահանջի դեպքում:

Վերոգրյալից հետևում է, որ նշված հանջանջը խտրական է, ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ է հակասում է գնումների մասին ՀՀ օրենքին:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից բողոքի լրացմամբ խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին փոփոխել հրավերը, այն է՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հրապարակված ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերում ներառված է հետևյալ պահանջը՝ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 26, 27,28, 29, 32, 35 չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ, պահանջը հանելով հրավերից:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն 05.05.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Պաշտպանության նախարարության կողմից Ձեզ հասցեագրված գրության վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Մովսեսյան ՍՊԸ կողմից ներկայացվել է պարզաբանման պահանջ՝ սահմանված ժամկետի պահպանմամբ, և անկախ այն հանգամանքից թե ուրբաթ օրվա աշխատանքային օրվա ավարտից հետո է այն ուղարկվել թե՝ ոչ, դրան օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ էր տալ պատասխան՝ հանգստյան օրերից հետո, այնինչ հանձնաժողովը չի տվել պարզաբանման պատասխան, անհիմն պատճառաբանությամբ:

Միաժամանակ Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն իրողության վրա, որ Մովսեսյան ՍՊԸ կողմից ուղարկված պարզաբանման հարցումը չի վերաբերվել մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը

ինչպես որ դա պնդում է Պատվիրատուն, և հետևաբար, պարզաբանման պատասխանը պետք է տրվեր, սակայն չի տրվել:

Պատվիրատուի այն պնդումը, որ՝ Գնման ընթացակարգի 2-րդ, 5-19-րդ, 21-րդ, 22-րդ, 26-29-րդ, 32-րդ և 35-րդ չափաբաժիններով ներկայացված գնման առարկաների համար ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջը մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման չափանիշների հետ որևէ առնչություն չունի, չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված պահանջը առերևույթ իրենից ներկայացնում է օրենքով չնախատեսված, հավելյալ որակավորման այնպիսի պահանջ, որի պատճառով մեր կազմակերպութունը չի կարողացել մասնակցել գնման ընթացակարգին, և հետևաբար՝ անկախ այն իրողությունից, որ նշված պահանջը Օրենքով նախատեսված պահանջների հետ որևէ կապ չունի, օբյեկտիվ իրականությամ մեջ այն գոյություն ունի և խոչնդոտում է մեր կազմակերպության մասնակցությանը գնման ընթացակարգին:

Ի պատասխան Պատվիրատուի այն դիտարկմանը, որ նշված ապրանքները արտադրվում են ոչ միայն Xerox ընկերության կողմից, այլ նաև այլ կազմակերպությունների կողմից, հայտնում եմ, որ քանի որ մեր կազմակերպությունը նշված ընթացակարգի շրջանակում ցանկություն ունի առաջարկել Xerox –ի արտադրության օրիգինալ արտադրանք, հետևաբար, տվյալ իմաստով մեզ բացարձակապես չի հետաքրքրում թե այլ կազմակերպությունների կողմից արդյոք արտադրվում է տվյալ ապրանքը թե ոչ, մեզ հետաքրքրում է այն, որ մենք ունենք Xerox-ի արտադրանք, որը չենք կարողանում առաջարկել պատվիրատուին, անհիմն խոչնդոտներ ստեղծելու պատճառով:

Ընդ որում, հարկ եմ համարում նաև նշել, որ Պատվիրատուի կողմից գրված տեխնիկական բնութագրերը այնպիսին, են, որ ուղղակի բացառում են նշված տեխնիկական բնութագրերին համապատասխանող, այլ արտադրողների կողմից ապրանքներ առաջարկելու հնարավորությունը, քանի տեխնիկական բնութագրերում ներառված՝ յուրաքանչյուր տուփի վրա part համարի (006R01701, 006R01702 և այլն) մակնշմամբ պահանջը համապատասխանում է բացառապես ու միայն Xerox կազմակերպության օրիգինալ արտադրանքին, քանի որ այլ կազմակերպությունների արտադրանի վրա չի լինում Xerox-ի part համարներ, իսկ լինելու դեպքում՝ դա կխախտի Xerox-ի հեղինակային իրավունքը, և հետևաբար, արտադրող որևէ կազմակերպություն երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ չի տա, որն ապացույց

կհանդիսանա իր կողմից Xerox-ի հեղինակային իրավունքի խախտման մասին, և դրա դիմաց դատական հայցերի և փոխհատուցման պահանջների հիմք կդառնա:

Ասվածից պարզ է դառնում, որ Պատվիրատուն հրավերով նախատեսել է այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք համապատասխանում են բացառապես Xerox-ի արտադրանքին, և ոչ համարժեք արտադրանքին, և միաժամանակ նախատեսել է այնպիսի պայման, որ այդ արտադրանքը մատակարարվի բացառապես Xerox-ի պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող, կամ դրա հետ փոխկապակցված կազմակերպությունների կողմից, ինչը ազատ մրցակցության խախտում է և խտրական մոտեցում:

Ըստ Պատվիրատուի տրամաբանության ստացվում է որ, Մովսեսյան ՍՊԸ-ն իր ունեցած Xerox-ի օրիգինալ արտադրանը պետք է չվաճառի Պատվիրատուին, փոխարենը՝ այլ արտադրողներիկց ձեռք բերի Xerox-ի հեղինակային իրավունքի խախտմամբ արտադրված այլ ապրանքներ, որպեսզի այլ արտադրողից ստանա երաշխիքային նամակ, և կարողանա վաճառել ապրանքը, ինչը ուղղակի անտրամաբանական է ՀՀ գնումների մասին օրենքի տեսանկյունից, և հակասում է ոչ խտրական գնման ընթացակարգ կազմակերպելու մասին օրենսդրական պահանջին:»:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն 18.05.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ներկայացված ապացույցների վերաբերյալ Մովսեսյան ՍՊԸ-ն հայտնում է հետևյալը.

Քանի որ Մովսեսյան ՍՊԸ-ն բողոքարկվող ընթացակարգի շրջանակում ցանկություն չունի առաջարկել այլ արտադրողների կողմից արտադրված արտադրանք, այլ միայն ու բացառապես Քսերոքս ֆիրմայի արտադրանք ունի և դա էլ ուզում է առաջարկել, սակայն ինչը չի կարողացել անել բողոքարկվող պահանջի առկայության պատճառով, ուստի նշված ապացույցները որևէ կերպ չեն կարող մեկնաբանվել որպես բողոքարկվող պահանջի՝ արտադրողի կողմից երաշխիքային նամակի կամ հապատասխանության սերտիֆիկատի ներկայացման հիմնավորվածությունը:

Անկախ այն հիպոթետիկ հանգամանքից թե քանի կազմակերպություն կարող է առանց Քսերոքս-ի հեղինակային իրավունքի խախտման արտադրել պատվիրատուի նշված պահանջներին համապատասխանող արտադրանքը, միևնույն է՝ Մովսեսյան ՍՊԸ-ն ունի միայն Քսերոքս ՍՊԸ-ի արտադրանք, որի պաշտոնական ներկայացուցիչ է հանդիսանում Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ-ն և ինչի պատճառով Մովսեսյան ՍՊԸ-ն չի կարողանում առաջարկել իր ունեցած ապրանքը:

Ասվածից պարզ է դառնում, որ Մովսեսյան ՍՊԸ-ն նպատակահարմար չի գտնում իր ունեցած Քսերոքս ֆիրմայի արտադրանքը չվաճառել, իսկ փոխարենը այլ արտադրողներից ապրանք գնել և առաջարկել Պատվիրատուին:

Այնուամենայնիվ, ևս մեկ անգամ ուսումնասիրելով ստացված ապացույցները, հայտնում եմ, որ դրանց վերաբերյալ Մովսեսյան ՍՊԸ հիմնական դիրքորոշումը հայտնվել է մեր ներկայացուցչի միջոցով բանավոր կարգով, նիստի ընթացքում, ըստ որի՝ մատակարարները հրաժարվում են Քսերոքս ֆիրմայի հեղինակային իրավունքի խախտմամբ, part համարներ նշել տուփերի վրա:

Ինտերնետից տպված նկարները չեն կարող համարվել տվյալ ապրանքի ձեռբերման իրական հնարավորությունը հաստատող ապացույց, քանի որ եթե նման տրամաբանությամբ շարժվենք, ապա կարելի է ինտերնետից տպել ՀԹՕ-ի լուսանկարներ, և դրանք որպես ՀԹՕ-ների գոյության մասին ապացույց ներկայացնել, ուստի գտնում ենք, որ նշված ապացույցով չի կարող ապացուցված համարվել այն, որ հրավերով նշված part համարներով այլ արտադրողների կողմից նույնպես իրականացվում է օրինական արտադրություն և հնարավոր է այն գնել ու վերավաճառել ՊՆ-ին, առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՊՆ-ին երբեք, բացի Քսերոքսից, այլ արտադրողների կողմից արտադրված համատեղելի արտադրանք չի մատակարարվել տուփի վրա part համարների նշման պահանջից հետո:

Կից ներկայացնում եմ Պատվիրատուի կողմից որպես ապացույց ներկայացված նկարից ստացված կայքի միջոցով, հենց այդ կայքի հետ բանակցությունների տեքստը, որից երևում է, որ անգամ Պատվիրատուի կողմից հղված արտադրողը հրաժարվում է կատարել անօրինական պահանջը:»:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն 18.05.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ելնելով այն հանգամանքից, որ Մովսեսյան ՍՊԸ-ն ակնկալում էր 25.04.2021թ.-ին հրավիրված նիստին Պատվիրատուի և այլ մասնակիցների ներկայությունը, ինչի պայմաններում հնարավոր կլիներ առավել արդյունավետ կերպով պարզաբանել բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, սակայն վերջիններս չեին ներկայացել նիստին, ուստի Մովսեսյան ՍՊԸ-ն սույնով ներկայացնում է լրացուցիչ դիրքորոշում, որը կապված է Պատասխանողի և այլ մասնակիցների բացակայության պայմաններում, չբարձրաձայնված և չպարզաբանված հարցերի և հանգամանքների հետ:

Սույն դիրքորոշումը հանդիսանում է բողոքի սկզբնական իրավական հիմնավորման լրացուցիչ վերլուծություն և հիմնավորում, որը ըստ մեզ պետք է բերվեր նիստի ընթացքում, սակայն չի բերվել, Պատասխանողի և այլ մասնակիցների բացակայության պատճառով:

Հրավերով նախատեսված մասնակցության իրավունքի և որակավորման հետ կապված օրենքով չնախատեսված չափանիշների, և բողոքարկվող պահանջի հրավերում ներառված լինելը հիմնավորված չլինելու վերաբերյալ

Բողոքի հիմքերն ու առարկան առավել հստակեցնելու նպատակով, հարկ ենք համարում անպայման ընդգծել, որ Մովսեսյան ՍՊԸ-ն սույն բողոքի շրջանակում որևէ կերպ չի վիճարկում ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա կետով սահմանված՝ ...արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտության մասին նորմի իրավաչափությունը, այլ վիճարկում է տվյալ ընթացակարգի հրավերի շրջանակում այդ նորմի սխալ կիրառման իրավաչափությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա կետով սահմանված է հետևյալը.

21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:...

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ բողոքարկվող ընթացակարգում նշված նորմի կիրառումը հիմնավորված չէ, նախ՝ գնման առարկայի բնույթից՝ պարտադիր սերտիֆիցակման ենթակա ապրանք չլինելու հանգամանքից ելնելով, և հետո՝ Պատվիրատուի կողմից չի հիմնավորվել դրա կիրառման անհրաժեշտությունը, ինչի անհրաժեշտությունը ուղղակի բխում է նորմի բավանդակությունից և իմաստից, և երկրորդ՝ անգամ նորմի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորված լինելու դեպքում՝ միևնույն գնման առարկայի նկատմամբ միաժամանակ չեր կարող կիրառվել երաշխիքային նամակի

և/կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտության մասին դրույթ, քանի որ նախ՝ նորմում կիրառված է "կամ" շաղկամպը, ինչը համադրելով Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների նպատակի և իմաստի հետ, ենթադրվում է, որ միևնույն գնման առարկայի նկատմամբ պետք է կիրառվի նախատեսված պայմաններից միայն մեկը, եթե կիրառելի է դրա անհրաժեշտությունը քանի որ միևնույն գնման առարկայի նկատմամբ երաշխիքային նամակի և/կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջի կիրառումը հանգեցնում է խտրական ու անհավասար մրցակցային պայմանների ստեղծման, քանի որ արտադրողն ու իր ներկայացուցիչը ազատվում են համապատասխանության սերտիֆիկատ ներկայացնելու անհրաժեշտությունից և դրա ձեռքբերման ծախսերից, իսկ մյուս մատակարարները ստիպված են լինելու նույն արտադրողի կողմից արտադրված ապրանքի համար ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատը, կրելով դրա ձեռքբերման ծախսերը, ինչը անխուսափելիորեն կազդի առաջարկվող գնի վրա, անհամաչափորեն մեծացնելով ապրանքի ինքնարժեքը, և սահմանափակելով մրցակցությունը արտադրողի, վերջինիս ներկայացուցիչների, ու դրանց հետ չկապված վերավաճառողների միջև: Միաժամանակ՝ նշված նորմի չմտածված պատճենումը հրավերում, բերել է նրան, որ փոխվել է նորմի իմաստը, վերափոխելով այն այնպես, որ երաշխիքային նամակը կամ համապատասխանության սերտիֆիկատը պետք է տրված լինեն արտադրողի կամ նրա ներկայացուցչի կողմից, այնինչ հաշվի առնելով 526-Ն որոշման մեջ ՀՀ կառավարության 10.10.2019թ. 1422-Ն որոշմամբ կատարված փոփոխությունը, որով ավելացվել է "արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ" արտահայտությունը, պարզ է դառնում, որ "համապատասխանության սերտիֆիկատ" արտահայտությունը նորմում եղել է ի սկզբանե՝ 04.05.2017թ.-ից, մինչև 10.10.2019թ. 1422-Ն որոշմամբ կատարված փոփոխությունը, և հետևաբար՝ այն չի կարող վերաբերվել արտադրողին կամ վերջինիս ներկայացուցչին, այլ վերաբերվում է ՀՀ-ում օրենքով սահմանված կարգով պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների տրվող՝ համապատասխանության սերտիֆիկատներին: Սակայն նորմի մեխանիկական պատճենման հետևանքով, հրավերում փոխվել է դրա իմաստը, վերածելով այն ըստ էության լրացուցիչ, օրենքով շնախատեսված որակավորման չափանիշի:

Վերոգրյալի հաշվառմամբ, գտնում ենք, որ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին կետի նորմը անհրաժեշտ է մեկնաբանել ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, ըստ որի՝

1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից, ըստ այդմ՝ նշված նորմի մեկնաբանությունը, և որպես հետևանք՝ կիրառումը պետք է համապատասխան և համահունչ լինի Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների հետ, ըստ որոնց՝

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

4. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Տվյալ պարագայում չհիմնավորված կերպով հրավերում երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ ներկայացնելու անհրաժեշտության մասին պահանջ է ներառվել, ինչը հանդիսանում է գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշ, որը՝

1) նախատեսված չէ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, քանի որ այն սահմանված է այլ իրավական ակտով, այլ նպատակով՝ պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ձեռքբերման համար,

2) խտրական է, և սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում և պարզեցնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ մի դեպքում՝ ապրանքն արտադրողի համար անհիմն կերպով պարզեցնում է մասնակցությունը, վերջինիս հետ չկապված այլ մասնակիցների համար բարդացնում է մասնակցությունը,

3) համարժեք չէ՝ ուղղակիորեն չի բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից, քանի որ երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացումը որևէ կերպ չի կարող ազդել պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժոշտությունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրով նախատեսված չէ պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքի մատակարարում:

Այն իրողությունը, որ հրավերով նախատեսված մատակարարից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտության մասին չհիմնավորված պահանջը, որպես այդպիսին հանդիսանում է գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված չափանիշ, հիմնավորվում է հետևյալ կերպ.

Գնումների մասին ՀՀ օրենքով սպառիչ կերպով սահմանված են որակավորման չափանիշները. դրանք են՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Միաժամանակ, օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով, նախատեսվել է նաև որ՝

Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Ելնելով մեջբերված նորմերի բովանդակությունից ու իմաստից, պարզ է դառնում, որ բացի նշված որակավորման չափանիշներից, որոնց պետք է բավարարի մասնակցող անձը, արգելվում է սահմանել գնումներին մասնակցելու և որակավորման հետ կապված այլ չափանիշներ, այնինչ՝ փաստացի ստացվել է այնպես, որ Մովսեսյան ՍՊԸ-ն բավարարելով Օրենքով նախատեսված բոլոր որակավորման չափանիշները և ունենալով գնումներին մասնակցելու իրավունք, չի կարողացել մասնակցել տվյալ գնման ընթացակարգին, քանի որ դրա հրավերով փառացի սահմանված է, որ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացնի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ: Հետևաբար՝ բողոքարկվող պահանջը ուղղակի հակասության մեջ մտնելով Օերնքով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների հետ, ուղղակի կապված է մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների հետ:

Հարվերով փառացի նախատեսվել է, որ .... չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Տվյալ կարգավորումը հայոց լեզվի կանոններով և Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի պահանջներով վերլուծելիս, կարելի է գալ միայն այն եզրահանգմանը, որ և՝ երաշխիքային նամակը և՝ համապատասխանության սերտիֆիկատը պետք է տրված լինեն ապրանքն արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից, այնինչ 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի "ա" կետով նախատեսված նորմը ճիշտ վերլուծելու պարագայում, հրավերով յուրաքանչյուր առանձին գնման առարկայի համար պետք էր նախատեսել կամ՝ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ, կամ՝ համապատասխանության սերտիֆիկատ, և այդ պարագայում ի հայտ չեր գա վերը նշված եզրահանգումը, ինչը իր բնույթով ենթադրում է, որ հրավերին կարող են մասնակցել բացառապես այն կազմակերպությունները, որոնք կարող են ստանալ արտադրողից կամ նրա ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Ասվածից պարզ է դառնում, որ Պատվիրատուի կողմից իրավական նորմի մեխանիկական պատճենումը հրավերի մեջ, ստեծվել է օրենքով չնախատեսված որակավորման չափանիշ՝ արտադրողի կամ նրա ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ որակավորման սերտիֆիկատ ստանալու հնարավորություն ունենալու տեսքով:

Ելնելով այն իրողությունից, որ հրավերով նախատեսված՝ պայմանագրի կատարման փուլում մատակարարից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտության մասին պահանջը անհիմն է, քանի որ հիմնավորված չէ դրա կիրառման անհրաժեշտությունը, և միաժամանակ այն սխալ է կիրառվել, հաշվի չառնելով այդ պայմաններից միայն մեկի կիրառման հնարավորությունը, պարզ է դառնում, որ այն իր էությամբ հանդիսանում է ոչ թե 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի "ա" կետով նախատեսված՝ պայմանագրի տեխնիկական բնութագրերը լրացնող հիմնավորված կարգավորում, այլ հանդիսանում է գնումների մասնակցության իրավունքի և որակավորման հետ կապված լրացուցիչ, օրենքով չնախատեսված չափանիշ:

Հետևաբար՝ չնայած, որ տվյալ գնման առարկայի համար կիրառելի չէ երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, այնուամենայինիվ այն կիրառվել է Պատվիրատուի կողմից, ինչը հակասելով 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի "ա" կետի պահանջներին, միաժամանակ հակասում է նաև գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված անթույլատրելի չափանիշների վերաբերյալ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներին:

Ասվածից հետևում է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ենթակետի "ա" կետով նախատեսված նորմի չհիմնավորված կիրառման հետևանքով տվյալ ընթացակարգի շրջանակում ի հայտ են եկել մասնակիցների համար օրենքով չնախատեսված լրացուցիչ որակավորման չափանիշներ, որոնք չեին կարող գոյություն ունենալ, եթե նշված նորմը անհիմն և սխալ չկիրառվեր, կամ ճիշտ կիրառման դեպքում՝ առկա լինեին այդ նորմի կիրառման հիմնավորվածությունը՝ օրինակ գնման առարկան լիներ այնպիսին, որ պարտադիր լիներ դրա սերտիֆիկացումը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Մովսեսյան ՍՊԸ-ն ամբողջովին պնդում է բերված բողոքը, և խնդրում բողոքը քննելիս, հաշվի առնել նաև սույն դիրքորոշմամբ բերված հիմնավորումները, բավարարել բողոքը, որպեսզի Մովսեսյան ՍՊԸ-ն հնարավորություն ունենա մասնակցել տվյալ ընթացակարգին և առաջարկել պատվիրատուի մոտ ծագած կարիքները օբյեկտիվորեն բավարարող՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանող ապրանքները ցածր գներով:»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6607-2021 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 29.04.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 04.05.2021թ.-ին թիվ ՊՆ/02/2373-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 29.04.2021թ. թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6607-2021 գրության՝ հայտնում եմ հետևյալը.

«Մովսեսյան» ՍՊԸ (այսուհետ՝ մասնակից) կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի (այսուհետ՝ գնման ընթացակարգ) շրջանակներում 21.04.2021թ. կատարված պարզաբանման հարցումներին գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում տրվել է հստակ և սպառիչ պատասխան: Հետագայում մասնակիցը 23.04.2021թ. (ուրբաթ) աշխատանքային օրվա ավարտից հետո պահանջել է նոր պարզաբանում, որի վերաբերյալ մասնակցին չի տրվել պատասխան, քանի որ հարցումը վերաբերում էր մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը, ինչպես նաև մասնակցի եզրահանգումներն ու հարցադրումներն ավելի շատ ոչ թե գնման ընթացակարգի մասնակցության վերաբերյալ էին, այլ ընդամենը փնովանք էին և բողոք:

Գնման ընթացակարգի 2-րդ, 5-19-րդ, 21-րդ, 22-րդ, 26-29-րդ, 32-րդ և 35-րդ չափաբաժիններով ներկայացված գնման առարկաների համար ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջը մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման չափանիշների հետ որևէ առնչություն չունի:

Նշված չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներն արտադրվում են ոչ միայն Xerox ընկերության կողմից, այլ նաև մի շարք այլ կազմակերպությունների կողմից: Հետևաբար՝ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջն իրենից ենթադրում է ցանկացած արտադրողի կամ նրա ներկայացուցչի (ոչ միայն ՀՀ-ում) կողմից տրված համապատասխան փաստաթղթի ներկայացում, ուստի խտրական մոտեցման, անհավասար մրցակցային պայմանների ստեղծման, առավել ևս՝ կոնկրետ կազմակերպության համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու վերաբերյալ մասնակցի հիմնավորումները բոլորովին անհիմն են:»:

Պատվիրատուի ներկայացուցիչը 19.05.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Մովսեսյան» ՍՊ ընկերության կողմից ԳԲՔԱ-ԼՕ-2021/35 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ներկայացված միջնորդությունը համարում ենք նշված ընթացակարգի շրջանակներում ոչ ընդունելի, քանի որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցված է և հայտերի բացում և գնահատում դեռևս տեղի չի ունեցել, իսկ բողոքաբերի բողոքը վերաբերում է նշված գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Հարկ ենք համարում նշել, որ՝

1) գնման ընթացակարգի 2, 5-19, 21, 22, 26-29, 32 և 35 չափաբաժիններով ներկայացված գնման առարկաների համար ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջը մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման չափանիշների հետ որևէ առնչություն չունի,

2) բողոքարկվող պահանջը սահմանվել է թանկարժեք սարքավորումների համար գործարանային, այլ ոչ թե անհայտ ծագման մասերի և նյութերի ձեռքբերման նպատակով,

3) նշված չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներն արտադրվում են մեկից ավել արտադրողների կողմից և համաձայն գնման առարկաների տեխնիկական բնութագրերի՝ նախատեսված են համապատասխան սարքավորումների համար (այդ մասին նույնիսկ վկայում է բողոքաբերի կողմից ներկայացված բանակցությունների տեքստը),

4) չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցված է, այնուամենայնիվ armeps.am համակարգում հնարավորություն

կա ուսումնասիրելու մասնակիցների հայտերը. այդ ուսումնասիրությունների արդյունքում հստակ կարող ենք արձանագրել բողոքարկվող պահանջի առկայության պարագայում մեկից ավել անձանց մասնակցություն գնման ընթացակարգին:

Պնդում ենք, որ գնման առարկաների բնութագրերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան. չեն խախտվել բողոքաբերի կողմից վկայակոչված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ և 22-րդ կետերի պահանջները:»:

Պատվիրատուի ներկայացուցիչը 26.05.2021թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Մովսեսյան» ՍՊ ընկերության կողմից ԳԲՔԱ-ԼՕ-2021/35 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված վերջին դիրքորոշման վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) եթե Պատվիրատուն չկիրառի օրենսդրությամբ իրեն վերապահված՝ բողոքարկվող պահանջը, ապա կունենանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակի խախտում, քանի որ Պատվիրատուն չունի անորակ և անհայտ ծագման ապրանքի կարիք,

2) եթե բողոքաբերի կողմից իրավական նորմի սխալ մեկնաբանմամբ առաջնորդվելով Պատվիրատուն բացառի երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջներից որևէ մեկը, ապա կունենանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքների խախտում, քանի որ արդյունքում տեղի կունենա մասնակիցների շրջանակի նեղացում,

3) գնումներին մասնակցելու իրավունքի պայմանները հստակ շարադրված են գնման ընթացակարգի հրավերում և չեն հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը,

4) գնումներին մասնակցելու որակավորման հետ կապված որևէ չափանիշ Պատվիրատուի կողմից չի սահմանվել, դա նույնպես հստակ երևում է գնման ընթացակարգի հրավերի ուսումնասիրության արդյունքում:

Հետևաբար՝ գնման ընթացակարգի 2, 5-19, 21, 22, 26-29, 32 և 35 չափաբաժիններով ներկայացված գնման առարկաների համար ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջը մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման չափանիշների հետ որևէ առնչություն չունի և սահմանվել է

թանկարժեք սարքավորումների համար գործարանային, այլ ոչ թե անորակ ու անհայտ ծագման մասերի և նյութերի ձեռքբերման նպատակով, իսկ նշված չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներն արտադրվում են մեկից ավել արտադրողների կողմից և համաձայն գնման առարկաների տեխնիկական բնութագրերի՝ նախատեսված են համապատասխան սարքավորումների համար:

Մեկ անգամ ևս պնդում ենք, որ գնման առարկաների բնութագրերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան, չեն խախտվել բողոքաբերի կողմից վկայակոչված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ և 22-րդ կետերի պահանջները:»:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Ընկերության 06.05.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 10.05.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/7300-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տոներային քարտրիջներ, լուսապատճենահանող սարքավորումների մասեր, թանաք, տպագրական սարքերի մասեր, մետաղալարեր, ջերմսոսինձի ձեռքբերման նպատակով 19.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>Ընթացակարգի կողմ՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ընթացակարգի քննության ընթացքում, Ընկերության 18.05.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 20.05.2021թ.-ի գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

22.05.2021թ.-ին ներկայացված գրությամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Սույն գրությամբ տեղեկացնում ենք 20/05/2021թ. էլեկտրոնային նամակի և կից փաստաթղթերի ստացման փաստը, ինչպես նաև հայտնում, որ Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ-ն օգտվելով իր իրավունքներից չի ներկայանալու բողոքի քննության վերաբերյալ 25/05/2021թ 14:30 կայանալիք նիստին, այն հիմնավորմամբ, որ.

1. Մովսիսյան ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/35, որևէ առնչություն չունի Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6 ծածկագրով մրցույթին հայտ ներկայացնելու հետ: Այն ուղղված է ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6 մրցույթի պահանջներին իրավաչափությանը և ՀՀ գնումների պահանջներին համապատասխանությանը:

Այս մասով, միայն կարող ենք նկատել, որ որևէ սահմանափակում բողոքում նշված չափաբաժինների մասով չենք տեսնում, քանի որ նշված չափաբաժիններով պահանջվող ծախսանյութերը նախատեսված են այդ թվում Xerox Ltd կողմից արտադրված սարքավորումների համար, սակայն այդ սարքավորումների համար ծախսանյութեր արտադրում է ոչ միայն Xerox Ltd-ն, այլև բազմաթիվ համատեղելի ծախսանյութեր արտադրողներ ինչպիսիք են/ առավել հայտնիները/՝ Patron, NVprint, GGprint, Sakura, UPrint/ Lama French/, Katun և այլ:

Վերոնշյալ մրցույթի պահանջով սահմանված է.

2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 26, 27,28, 29, 32, 35 չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Սույն սահմանմամբ, ապրանք է հանդիսանում նշված չափաբաժիններով պահանջվող ծախսանյութերը:

Մեր մեկնաբանությամբ, ցանկացած այլընտրանքային և համատեղելի ծախսանյութեր արտադրող և գործարանային արտադրանքը առաջարկող տնտեսվարողը և պաշտոնապես իրացնողը կարող էր ներկայացնել պահանջվող օրենքով թույլատրված «այլ

պահանջվող փաստաթղթերը», որոնք միայն կհավաստիացնեին գնորդին, որ մատակարարի կողմից առաջարկվող և մատակարարվող արտադրանքը գործարանային է և համապատասխանում է ISO կամ ГОСТ որակի սերտիֆիկացիաների պահանջներին և մատակարարված ապրանքը արտադրողի կողմից հրապարակված տեխնիկական մասնագրերին:

2. Տեղեկացնում ենք, որ Մովսիսյան ՍՊԸ-ն առերևույթ ցանկություն ունի զրպարտելու և վարկաբեկելու Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ-ին, առանց պարզաբանված և ստուգված հիմքեր ունենալու՝ մեղադրելով ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6 մրցույթի շրջանակներում կեղծ փաստաթղթեր ներկայացնելու կամ տրամադրելու առնչությամբ:

Ի գիտություն, Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ-ն 1994թ-ից մինչ օրս հանդիսանում է Xerox Ltd արտադրողի պաշտոնական լիազորված գործընկերը ՀՀ-ում՝ կից հիմնավորող սերտիֆիկատներ և, առնվազն, բավարարելով «ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ» պայմանին, որևէ հիմք չի ունեցել մրցույթի պահանջով սահմանված փաստաթուղթ կեղծելու, քանի որ Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ-ն՝ հանդիսանալով դիստրիբյուտոր, որը հավասար է ՀՀ-ում արտոնագրված ներկայացուցչի կարգավիճակի սույն մրցույթի պահանջների իմաստով, իր անունից արդեն կարող էր հավաստել մատակարարվող ապրանքների համապատասխանությունը և ներկայացներ անհրաժեշտ սերտիֆիկատները:

Հանդիսանալով Xerox Ltd-ի դիստրիբյուտորը ՀՀ-ում, առաջարկելով այդ արտադրողի կողմից արտադրված ծախսանյութերը, առավել հեղինակավոր համարելով Xerox Ltd-ին տվյալ պարագայում, Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ-ն դիմել և էլեկտրոնային եղանակով Xerox Ltd-ից ստացել է Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ, Ալֆա Էտալոն ՍՊԸ կազմակերպությունների կողմից մրցույթի հայտերի հետ ներկայացված MAF նամակը/ները :

Ի դեպ, տեղեկացնում եմ, որ Մովսիսյան ՍՊԸ-ն երբևէ չի դիմել մեր կազմակերպությանը ըստ հարցման իրենց գնանշման ներկայացման կամ որևէ այլ որակի համապատասխանության փաստաթուղթ տրամադրելու հիմնավոր խնդրանքով:

Ձեզ եմ ներկայացնում, սույն միջնորդության հարցի առնչությամբ, մեր կողմից կատարված պարզաբանումների հարցման Xerox Ltd տարածաշրջանային գրասենյակի և ՀՀ համար պատասխանատու ստորաբաժանման պատասխանը՝ կից նամակագրության տեսքով:»:

6. <u>ԳԲՔԱ-LO-2021/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տոներային քարտրիջներ, լուսապատճենահանող սարքավորումների մասերի, թանաքի, տպագրական սարքերի մասերի, մետաղալարերի և ջերմսոսինձի ձեռքբերման նպատակով 19.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է, որ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 26, 27,28, 29, 32, 35-րդ չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

7. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 29.04.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի

կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների

համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տոներային քարտրիջներ, լուսապատճենահանող սարքավորումների մասերի, թանաքի, տպագրական սարքերի մասերի, մետաղալարերի և ջերմսոսինձի ձեռքբերման նպատակով 19.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 26, 27,28, 29, 32, 35-րդ չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի

սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման/հերքման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հավելված 1-ով նախատեսված՝

տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտման առումով, անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը՝ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 26, 27,28, 29, 32, 35-րդ չափաբաժինների մասով ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 29.04.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/35 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**